բոսի մաւր Վարդխաթունին վկայութենովն· Զնքուշցի Մարտիրոս վարդապետին վկայութենովն. Կորցի Կիրակոս վարդապետին, Կարապետ եպիսկոպոսի վկայութեամբն· Գողթան գաւառէն եւ Աւետիս արհիեպիսկոպոսի եւ Ղուկաս եպիսկոպոսին վկայութեամբն· Յովհաննէս եպիսկոպոսին, Ղուկաս եպիսկոպոսին, Կիրակոս երիցին, Երուսաղէմայ եղբայր Դաւթի եպիսկոպոսի վկայութեամբն· Մովսէս վարդապետին Տաթեւացւոյն եւ այլ ամենայն ուխտականաց, եկաց եւ բնակաց հինգհարիւր ժողովելոց:

Սոցին ամենեցուն ընտրութեամբ եւ վկայութեամբ ի յամսեանն Ապրիլի հինգն, աւուր երկուշաբթի աւագ Զատկի, շնորհեցի կրկին եւ վերստին զիւր սեփական աթոռսն եւ վիճակ եւ բաժին ի ձեռս դորայ· եւ զվերակացութիւնս տնօրինականացս Քրիստոսի յԱստուծոյ մերոյ՝ զսուրբ Ծնունդն, զսուրբ Յարութիւնն եւ այլն, եւ զայլ ամենայն սուրբ Տնօրինականաց եւ Եկեղեցեաց իշխանութիւն ի ձեռն սորին լիցի: Եղաք հաստատութեամբ զմեր հոգեւոր որդիս զտէր Գրիգոր արքեպիսկոպոսն ի սուրբ յԱթոռս գրաւորական նամակաւ եւ բարձրագոյն իշխանութեամբս մեր, լինել ձեզ այցելու եւ հոգեւոր առաջնորդ՝ խրատել եւ ուսուցանել զձեզ ի տուէ եւ ի գիշերի գնալ յաւրէն եւ ի պատուիրանս Տեառն անարատութեամբ, տալով զանձն իւր աւրինակ բարեաց ձեզ ամենեցուն. ինքն արասցէ եւ զձեզ ուսուսցէ սրբութեամբ եւ արդարու-